**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

15 ԱՊՐԻԼԻ 2021Թ N1

<<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ԲԿ-ն՝ տարածաշրջանի միակ բժշկական կազմակերպությունը սպասարկում է մոտ 12 000 բնակիչ ունեցող Մեղրի համայնքի բնակչությանը և համայնքում տեղակայված ՌԴ ՊՆ սահմանապահ զորամասի և ՀՀ ՊՆ Ագարակի զորամասի զինծառայողներին, նրանց ընտանիքի անդամներին: Կազմակերպության կողմից մատուցած ծառայությունների որակն ու ծավալը բավարար մակարդակ չեն ապահովում, ինչն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները:Հաշվի առնելով համայնքի ստրատեգիական նշանակությունը, հեռավորությունը մարզկենտրոնից, մայրաքաղաքից, ձմռան սեզոնին ճանապարհների հաճախակի անանցանելիությունը, կարևորելով որակյալ բուժսպասարկում ունենալու անհրաժեշտությունը, ինպես ցույց տվեց Արցախյան պատերազմը՝ պատերազմական վիճակում առաջին ճիշտ բժշկական օգնություն կազմակերպելու կարևորությունը՝ դիմում ենք բժկական կենտրոնը զինվորական հոսպիտալի վերակազմակերպման առաջարկով: **Բերդի տարածաշրջանի օրինակն այս դեպքում ուսանելի է, հոսպիտալի գործունեության նպատակը կլինի օրենքով սահմանված կարգով զինծառայողների և քաղաքացիների բժշկական օգնությունն ու սպասարկումը, ինչպես նաև բնակչության հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության հասանելիության ապահովելը:**

Հոսպիտալի հիմնումը խիստ շահեկան կլինի Մեղրի համայնքի բնակիչների համար, բուժհաստատությունը կհամալրվի լավագույն մասնագետներով, առավել ժամանակակից սարքավորումներով, մեծապես կբարելավվի ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների որակը, ինչը կխթանի տարածաշրջանի զարգացմանը:

Դիմում ենք Մեղրի համայնքի ողջ բնակչության անունից, խնդրում և ակնկալում ենք խնդրին ուշադրություն դարձնելու և դրական լուծում տալու հարցում:

ավագանու անդամներ՝

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ----------

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15

ք. Մեղրի